

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

4-5-րդ դդ. սահմանագլխին հայոց այբբենական գրի ստեղծումն անհրաժեշտություն էր դարձել: Բանավոր խոսքի լեզուն, անշուշտ, եղել է հայերենը, իսկ գրագրությունը կատարվել է հունարեն, ասորերեն և պարսկերեն: Եկեղեցական ժամասացության ընկալելիությունը և Աստվածաշնչի գաղափարների տարածումը դժվարությունների էին հանգում, քանի որ նրանք հայերեն չէին գրված, և հոգևորականները, որ այդ ժամանակաշրջանի ուսուցիչներն էին, կարողում էին հունարեն տեքստը և բանավոր թարգմանում հայերեն: Քրիստոնեության գաղափարները Հայաստանի բոլոր հատվածներում բնակչության բոլոր շերտերին հասու դարձնելու համար հարկավոր էր սեփական լեզվով ժամասացություն և հայերեն թարգմանված «Աստվածաշունչ»: Նման թարգմանական գործունեության համար անհրաժեշտ էր սեփական գիր:

387 թ. Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև Մեծ Հայքի թագավորության բաժանումից հետո հայոց գրերի անհրաժեշտությունն է՛լ ավելի է մեծանում: Եթե գրերը չստեղծվեին, ապա հայ ազգն ինքնության պահպանման կարևոր պատվարի բացակայության խնդիր կունենար: Փաստորեն, Հայաստանը բաժանված էր այդ ժամանակաշրջանի երկու գերտերությունների միջև, և թագավորության կարգավիճակը դրանից հետո հռոմեական հատվածում պահպանվեց ընդամենը շուրջ 2 տարի, իսկ պարսկական հատվածում՝ 41 տարի: Ի սկզբանե պարսկական մասում արգելվում է հունարեն գրագրությունը, որովհետև այն ընկալվում էր իբրև թշնամի պետության՝ Հռոմեական կայսրության լեզուներից մեկը: Հնչյունական առումով հայերենին ավելի մոտ էր հենց հունարենը, որովհետև, օրինակ, ասորերեն այբուբենը, որպես սեմական լեզու, ձայնավորներ չունեց:

Փաստորեն, հայ այբբենական գրի ստեղծումը ոչ միայն քրիստոնեության ազգայնացման, այլև հայ քաղաքակրթական և ինչու ոչ՝ քաղաքական հարց էր կարգավորում Հայաստանի համար դժվարացող աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում: Հայոց գրերն ստեղծելը, ի վերջո, վիճակված էր Մեսրոպ Մաշտոցին: Նա հայոց նշանագրերի ստեղծման անհրաժեշտության մասին հայտնում է կաթողիկոս Սահակ Պարթևին, ով հարցը բարձրացնում է նաև Վռամշապուհ արքայի մոտ:

Պարսկաստանին ենթակա Արևելահայկական թագավորության թագավորը 388 թ.-ից Վռամշապուհին էր, որը կառավարել է մինչև 414 թ.: Նրա կառավարման առաջին տարիներին Դանիել անունով մի ասորի եպիսկոպոս հայերենի համար շրջանառության մեջ դրեց որոշ նշանագրեր: Թագավորի և կաթողիկոս Սահակ Ա Պարթևի (կթդ. 387-439 թթ.) հրամանով Վահրիճ Խադունի անունով մի իշխան Դանիելի մերձավոր Հաբել երեցի միջոցով Դանիելյան նշանագրերը հասցրեց Վաղարշապատ: Որոշ ժամանակ այդ նշանագրերով ուսուցում կազմակերպելուց հետո պարզվեց, որ դրանք չէին համապատասխանում հայերենի հնչյունական կազմին, քանի որ այդտեղ ձայնավորները բացակայում էին, ինչի պատճառով էլ որոշումները շարունակվեցին: Ի վերջո, ստանալով թագավորի և կաթողիկոսի աջակցությունը, Մեսրոպ Մաշտոցը ձեռնամուխ է լինում իր նվիրական գործին:

Նախամաշտոցյան շրջանում գոյություն են ունեցել հայերեն նշանագրեր, որոնք, սակայն, այբբենական բնույթի չեն եղել, գաղափարագիր, այսինքն՝ հիերոգլիֆ են եղել՝ կազմված լինելով շուրջ 300 նշաններից: Հայ և օտար տարբեր պատմիչներ ուղղակիորեն և անուղղակիորեն խոսում են այս մասին, սակայն միաբերան մեծարում են Սուրբ Մեսրոպ Մաշտոցի գործը, որովհետև նա ստեղծում է լիովին նոր բնույթի՝ այբբենական գիր: Ընդ որում՝ նա համաշխարհային պատմության մեջ միակ մարդն է, որ ստեղծել է երեք տարբեր գրային համակարգեր՝ մինչև օրս կիրառվող հայոց գրերը, աղվանական գարգարացիների ցեղի գիրը և վրաց իմաստուն Ջաղայի հետ միասին՝ մինչև 11-13-րդ դարեր կիրառված վրաց նախկին գիրը:

Վռամշապուհը Մեսրոպ Մաշտոցին ուղարկում է Ասորիք (Սիրիա)՝ ասորի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հետ բանակցելու: Մեսրոպ Մաշտոցն իր մի քանի աշակերտների հետ Ասորիք է գնում, որտեղ էլ ընդունելություն է գտնում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների կողմից: Լինում է Ամիդ և Եդեսիա քաղաքներում, խորհրդակցում է տեղի հոգևորականության հետ: Կորյունի վկայությամբ՝ Եդեսիայում Մեսրոպ Մաշտոցը արարեց 36 նշանագրերից կազմված հայոց այբուբենը. «...Նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր...»: Մեսրոպ Մաշտոցն իր նորագյուտ տառերը դասավորել է՝ օգտվելով հունական այբուբենի հերթականությունից, տառերին տվել է անուններ (այբ, բեն, գիմ...) և սահմանել դրանց թվային արժեքները (Ա՝ 1, Բ՝ 2...): Ապա նա Սամոսատ է գնացել, որտեղ հմուտ հունագետ Հռոփանոսի օգնությամբ գեղագրել է նշանագրերը: Այդտեղ Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտներից երկուսը՝ Յովհան Եկեղեցացին և Յովսեփ Պաղնացին, նոր գրերով «Աստվածաշունչ»-ի առաջին թարգմանությունն են ձեռնարկում՝ սկսելով Սողոմոնի առակներից, որոնց առաջին տողերն են. «Ճանաչել գիմաստութիւն և գխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Այս նախադասությունը հետագայում թարգմանչաց շարժման բնաբանն է դարձել և մինչ այժմ էլ շարունակում է մնալ հայ ժողովրդին առաջնորդող կարգախոսներից մեկը:

Գրերն ստեղծելուց հետո Մեսրոպ Մաշտոցը գալիս է Վաղարշապատ, ուր Նրան մեծ ցնծությամբ են ընդունում, ընդ որում՝ ցնծող բազմությանն առաջնորդում էին թագավորը և կաթողիկոսը, որոնք դիմավորեցին Մեսրոպ Մաշտոցին Ռահ (այսինքն՝ Արաքս) գետի ափին:

Սկսվում է Նորագյուտ գրերի ուսուցման գործընթացը: Բացվում են դպրոցներ, և կրթվում են Մեսրոպ Մաշտոցի աշակերտների առաջին խմբերը: Մեսրոպ Մաշտոցի և կաթողիկոս Սահակ Պարթևի ջանքերով ծավալվում է Թարգմանչաց շարժումը, որի մեջ ներգրավվում է Նրանց աշակերտների ավագ խումբը: Իր առաջին աշակերտների (Կորյուն, Եզնիկ Կողբացի, Մովսես Խորենացի և այլք) և կաթողիկոս Սահակ Պարթևի հետ Մեսրոպ Մաշտոցը հայերեն է թարգմանում «Աստվածաշունչ»-ը: Թարգմանվում են Նաև քերականական, աստվածաբանական, փիլիսոփայական և այլ բնույթի բազմաթիվ աշխատություններ: Հետաքրքիր է, որ հայկական Էլիտայի՝ թագավորի, կաթողիկոսի, նախարարների և հոգևորականների մոտ սեփական գրի և սեփական լեզվով գրականության անհրաժեշտության գաղափարն ի հայտ է եկել շուրջ հազար տարի ավելի շուտ, քան արևմտավրոպական ազգերի մոտ: Սա բացառիկ կարևոր երևույթ է:

Կորյունի և Մովսես Խորենացու հաղորդմամբ՝ Մեսրոպ Մաշտոցը տեղի գիտունների հետ ստեղծում է Նաև վրաց և աղվանական գարգարացոց ցեղի «կոկորդաձայն, կոշտ, խժական, կոպիտ լեզվի համար» գրերը:

Ղազար Փարպեցին ասում է, որ Վաղարշապատում հայկական դպրոց բացելուց հետո Մեսրոպ Մաշտոցը դպրոց բացեց Նաև Օշականում, որտեղ հետագայում պետք է թաղվի հայ գրերի ստեղծողը: Այնուհետև դպրոց է բացվում Արցախ աշխարհի Ամարասի վանքում, որտեղ թաղված էր Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը: Դրանից հետո

440 թ. Մեհեկան ամսի 13-ին (այսինքն՝ փետրվարի 17-ին) Մաշտոցը վախճանվում է: Նրա մարմինը Վաղարշապատից տեղափոխվում է Օշական՝ հազարապետ Վահան Ամատունու տիրույթը՝ Հմայակ Մամիկոնյանի և այլոց ուղեկցությամբ: Վերջինս հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի եղբայրն էր: Վահան Ամատունին փետրվարի 20-ին Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի վրա սկսում է եկեղեցի կառուցել՝ շինարարությունն ավարտելով 443 թ.: Այս մասին պատմում է Կորյունը. «Եվ /այնտեղ/ ժողովված գլխավոր աշակերտների անուններն այս են. առաջինը՝ Հովսեփ, որ և սկզբում գրեցինք. երկրորդինը՝ Թադիկ, զգաստ /ու/ Վարդապետի հրամանների նկատմամբ շատ զգույշ մարդիկ: Չինվորական կողմից առաջինի անունը՝ Վահան, Ամատունի ցեղից, որ Մեծ Հայաստանի հազարապետն էր, և երկրորդինը՝ Հմայակ, Մամիկոնյան տոհմից, - պատվական, երկյուղած /ու/ Վարդապետի հրամանները կատարող մարդիկ:

Եվ մինչդեռ սրբի ձեռները կարկամված էին դեպի երկինք, խաչանման, լուսավոր շողավոր ձևով սքանչելի տեսիլ երևաց այն ապարանքի վրա, ուր վախճանվում էր երանելին. և ամեն մարդ ինքը տեսավ այդ, և ոչ թե ընկերը պատմեց: Եվ Նա սրբերին սեր ու միաբանություն ավանդեց, մերձավորներին ու հեռավորներին օրհնությամբ պսակեց և հաճոյական աղոթքը Քրիստոսին հասցնելով՝ հանգավ:

Վահանն ու Հմայակը, աշխարհական բազմության հետ, վերցրին Նրան վախճանվածի պատրաստությամբ, սաղմոսներով և օրհնությամբ ու հոգևոր ցնծություններով, վառած կանթեղներով ու բորբոքված ջահերով և բուրող խնկերով, և ամբողջ լուսաճաճանչ աշտանակով, և այն լուսավոր առաջախաղաց խաչանշանով, բարձրացան Օշական և այնտեղ մարտիրոսարանի մեջ դրին, օրինավոր հիշատակը կատարեցին, ապա նշանն աներևույթ եղավ, և Նրանք ետ դարձան յուրաքանչյուրն իր տեղը:

Իսկ երեք տարի անցնելուց հետո Վահան Ամատունուն հաջողվեց քրիստոսասեր ջանքով սքանչելի տաճար կանգնեցնել տաշած, քանդակած քարերով, և տաճարի ներսում շինեց Սրբի գերեզմանը: Նա Քրիստոսի կենդանարար մարմնի և արյան սեղանի համար վայելուչ, գույնզգույն, ոսկով և արծաթով ու թանկագին քարերով պայծառափայլ անոթներ պատրաստեց ի հիշատակ, և մի տեղ հավաքված բոլոր սրբերի հետ Քրիստոսի խաչակրոն վկայի, երանելի Մաշտոցի մարմինը փոխադրեց տաճարի գերեզմանը: Եվ Նրա Թադիկ անունով աշակերտին, մի զգաստ ու բարեպաշտ մարդու, եղբայրների հետ, երանության հասած Սրբի համար սպասավոր կարգեցին ի փառս Աստծու»:

Մեջբերված հատվածից երևում է, որ Օշական գյուղի մի մատուռում առաջ էլ թաղված են եղել մարտիրոսներ կամ վկաներ, այսինքն՝ քրիստոնեական հավատի համար նահատակվածներ, ինչը վկայում է Մեսրոպ Մաշտոցի հուղարկավորության վայրի՝ մինչ այդ էլ քրիստոնեական նվիրական սրբատեղի լինելու փաստի մասին: Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Վահան Ամատունին, լինելով հազարապետ, իր չափազանց մեծ հեղինակությամբ կարողացել է վճռական դերակատարություն ունենալ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանատեղիի ընտրության հարցում: Ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը, հիմք ընդունելով մի քանի տասնյակ հեղինակների (Կորյուն, Ղազար Փարպեցի, Հովհաննես Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի, Վարդան Արևելցի, Կիրակոս Գանձակեցի և այլք) հաղորդած տեղեկությունները, հիմնավորել է Մեսրոպ Մաշտոցի՝ Օշականում թաղվելու փաստը:

Վահան Ամատունու թաղվելու տեղի վերաբերյալ ժողովրդական մի ավանդություն է տարածված, ըստ որի մահվան պահին Վահան Ամատունուն հարցնում են, թե ուր կուգենա թաղվել: Նա պատասխանում է, որ չի ցանկանում Մեսրոպ Մաշտոցի կողքին թաղվել, քանզի ինքը հիշատակելու արժանի այնքան գործ չի արել,

որքան իր ուսուցիչ և հայոց ուսուցչապետ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը, հեռու էլ չի ցանկանում, քանի որ իր ուսուցչին շատ է սիրել, ուստի խնդրում է թաղել իրեն Մաշտոցից 15 քայլ (40 արմակաչափ կամ 12 մետր) հեռավորության վրա: Եվ իսկապես, հենց այսքան հեռավորության վրա էլ գտնվում է նրա գերեզմանը, որի վրա տապանաքար-հուշարձանակոթող է դրվել հավանաբար 1880 թ. և այնուհետև 20-րդ դ. երկրորդ կեսում նորոգվել:

Մաշտոցի հիշատակը հարգելու համար կաթողիկոս Յովսեփ Ա Յողոցմեցին (Վայոցձորեցի, կթղ. 440-452 թթ.) Կորյունին պատվիրել է գրել Մաշտոցի կենսագրությունը, որը, ըստ էության, դառնում է հայերեն գրված առաջին ինքնուրույն հեղինակային գիրքը:

Մաշտոցը սրբացվել է և դասվել Հայ եկեղեցու սրբերի կարգը: «Հայսմավուրք»-ում Մաշտոցի անունը 3 տոներով է հիշատակվում, որոնք բոլորն էլ շարժական են.

1. Սրբոյն Իսահակայ Պարթևի հայրապետին մերոյ (տոնվում է հունվարի 24-ից մինչև փետրվարի 28-ը՝ Առաջավորաց պահքի կիրակիից հետո 14-րդ օրը՝ շաբաթ),

2. Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ (տոնվում է հունիսի 1-ից մինչև հուլիսի 16-ը՝ Հոգեգալուստից հետո 33-րդ օրը՝ հինգշաբթի):

3. Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դավթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացուն և Ներսիսի Կլայեցուն (տոնվում է հոկտեմբերի 3-ից նոյեմբերի 7-ը): Սա Սրբոց Թարգմանչաց կարևորագույն տոնն է:

Փաստորեն, Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեացրեց հայոց ազգը, իսկ Մեսրոպ Մաշտոցն ամբողջապես ազգայնացրեց քրիստոնեությունը: Թաղվելով Օշականում՝ Ս. Մեսրոպ Մաշտոցը սրբագործեց և սրբազան ուխտատեղի դարձրեց այդ բնակավայրը:

Չափազանց մեծ է գրերի գյուտի պատմական նշանակությունը: Հայկական ինքնությունն ստացել է այն ձևակերպումը, որով ժամանակակից հայը պատկերացնում է իր ազգային պատկերացումը: Հունարենից թարգմանվել է Աստվածաշունչ մատյանը, և Մեսրոպյան թարգմանությամբ հայերեն Աստվածաշունչը, որ ունի իր յուրահատուկ առանձնահատկությունները, դարձել է հայկական ինքնության անկյունաքարը: Չափազանց կարևոր է, որ գրերի գյուտով և Թարգմանչաց շարժմամբ սկիզբ է դրվել հայ մատենագրությանը, և ծաղկում է ապրել հայ մշակույթը: Մշակույթի վերելքի շնորհիվ այդ ժամանակաշրջանը հայոց պատմության մեջ մնացել է որպես հայոց մշակույթի ոսկեդար, իսկ հայ գրերը և նրանով ստեղծված մշակութային ժառանգությունն այդուհետ դարձել են ազգային ինքնության հարատևման կարևորագույն արժեք հետագա բոլոր սերունդների համար:

Ձևավորվում է հայ պատմագրությունը: Ոսկեդարյան հայ պատմիչների մեջ առանձնապես աչքի է ընկնում պատմահայր Մովսես Խորենացին, որն առաջինն է, որ իր «Պատմութիւն Հայոց» երկում շարադրել է հայոց պատմությունը սկզբից մինչև իր ապրած ժամանակը: Պատմագրական կարևոր երկեր են շարադրել Կորյունը, Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Ղազար Փարպեցին: Իմաստասեր Եզնիկ Կողբացին «Եղծ աղանդոց» աշխատության մեջ հիմնավորել է քրիստոնեության արժեհամակարգային առավելություններն այդ ժամանակ գոյություն ունեցած մյուս կրոնների, մասնավորապես՝ զրադաշտականության նկատմամբ: Հույն և հռոմեացի փիլիսոփաների շրջանում մեծ համբավ ուներ հայ նշանավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթը: Այդ ժամանակ Արևմտյան Հռոմեական կայսրությունն ընկնում է բարբարոսական ցեղերի ձեռքը, և հույն ու հռոմեացի փիլիսոփաների գիտական նվաճումներն ու երկերը մեծամասամբ մոռացվում են: Այդպիսի երկերից շատերը պահպանվել են հենց ոսկեդարյան հայ թարգմանիչների շնորհիվ: Այդ նվաճումները զարգացրել է 7-րդ դ. հայ նշանավոր գիտնական Անանիա Շիրակացին:

պ. գ. թ., դրց. Մ. Մալխասյան